Արձանագրություն N 2

Առողջապահության նախարարության 2022 թվականի կարիքների համար էլեկտրոնային աճուրդով, բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հրավերի պարզաբանման նիստի

ք. Երևան «22» «Դեկտեմբեր» 2021թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ	Վ. Ավագյան, Ա. Մանուկյան
	Ս. Նազինյան, Մ. Համբարձումյան
Հանձնաժողովի քարտուղար	Զ. Թովմասյան

1. Գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին

(Հ. Հարությունյան)

2021 թվակնի դեկտեմբերի 10-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 2021 թվականի դեկտեմբերի 21-ին և 22-ին ստացվել է հարցադրում՝ հանձնաժողովը որոշեց տրամադրել պարզաբանում և հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը հրապարակվել տեղեկագրում:

Մասնակիցների կողմից ստացված հարցումները և տրմադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Խնդրում ենք տալ պարզաբանում թիվ 1 չափաբաժնի նշված կետերի մասով

1. Խնդրում ենք պարզաբանել՝ Իզոկենտրոնի կիզակետի հեռավորությունը՝ ոչ պակաս քան 590մմ , թվի իսկությունը: Վրիպա՞կ է , թե՞ ոչ: 2. ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 13-րդ հոդվախի 2-րդ մասի համաձայն.

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.....:

Խնդրում եմ պարզաբանել արդյո՞ք հնարավոր է վերոնշյալ հրավերին ներկայացնել ավելի բարձր Գենտրիի քաշ ունեցող ապրանք, եթե ոչ ի՞նչ օբյեկտիվ պայմանով է

պայմանավորված նման քաշի նշումը և /կամ կատարել հրավերի 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրում փոփոխություն ՝ սահմանելով Գենտրիի ավելի բարձր քաշ, որը հնարավորություն կտա միևնույն ֆունկցիոնալ տեխնիկական բնութագրով ավելի շատ տեսակի ապրանք առաջարկել և ավելի մատչելի գնով, դրանով իսկ ապահովելով գործընթացի մրցակցային պահանջը:

3. Խնդրում ենք նշել իրական կտրվածքների քանակը, այլ ոչ թե ստացվող շերտերի քանակը՝ Ստացվող շերտերի քանակը ոչ պակաս քան 32 :

4.Խնդրում ենք պարզաբանել մարտկոցների տեսակը՝ Տեսակը՝ առցանց, գործարանային գելային տեսակի մարտկոցներով , ի՞նչ է նշանակում գործարանային , ի՞նչ է նշանակում գելային :

5. Խնդրում ենք հստակեցնել երաշխիքային ժամկետը ,քանի որ հայերենում նշված է ոչ պակաս քան 24 ամիս , իսկ ռուսերեն տարբերակում՝ ոչ պակաս քան 12 ամիս:

Պարզաբանում N 1

1. Տեխնիկական բնութագրում նշված է իզոկենտրոնի և կիզակետի հեռավորությունը՝ ոչ պակաս քան 590մմ, այլ ոչ իզոկենտրոնի կիզակետի հեռավորությունը՝ ոչ պակաս քան 590մմ, որը համապատասխանում է ոչ մեկ մոդելի:

2. Ժամանակակից մոդելներում օգտագործվում են մետաղի ամրությանը չզիջող և էականորեն ավելի թեթև նյութեր, որը հնարավորություն է տալիս զգալիորեն իջեցնել քաշը:

3. Ստացվող շերտերի քանակը ոչ պակաս քան 32 նշանակում է, որ վերջնական արդյունքում ընդհանուր ստացվող շերտերի քանակը 32-ից պակաս չէ:

4. Գործարանային գելային տեսակի մարտկոցներով նշանակում է գործարանային արտադրության (ոչ անհայտ ծագման) գելային (ոչ թթվահիմնային) տեսակի մարտկոցներով:

5. Երաշխիքային ժամկետը պետք է լինի ոչ պակաս քան 24 ամիս, ռուսերեն տարբերակում վրիպակ է եղել:

Հարցադրում N 2

Խնդրում ենք տալ պարզաբանում թիվ 1 չափաբաժնում նշված Արդյունավետություն կետի մասով :

Պարզաբանում N 2

Հարգելի մասնակից ի պատասխան Ձեր հարցմանը. Դա նշանակում է, որ 14 x 17 դյույմ չափի ռենտգենյան ժապավեն տպի՝ ոչ պակաս քան 75 ժապավեն / ժամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Հարությունյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2021 թվականի դեկտեմբերի 29-ին ժամը 11:00-ին՝ Առողջապահության նախարարություն, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, 2-րդ հարկ, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

Նախագահ՝ ---------- Հ. Հարությունյան

Անդամներ՝ ---------- Վ. Ավագյան

---------- Ա. Մանուկյան

---------- Ս. Նազինյան

---------- Մ. Համբարձումյան

Քարտուղար՝ ---------- Զ. Թովմասյան